

ԺԱՅՌ ԵՒ ԱԼԻՔՆԵՐ

Հպարտ ու մենակ, դարերի առաջ
Կուրծքը դէմ արած անեղ փոքորկին,
Միշտ խոժոռ, մուսլ, անձայն, անհառաչ
Կանգնած է ժայռը խռիւս, անմեկին։
Իսկ ալիքները ուրախ քրքիչով
Գնում են գալիս, նըչում ու խաղում
Եւ խփում ժայռին ուրախ ժրպիտով։
Նայում է ժայռը եւ լուռ մըմնջում.
— «Ա՛յ, երջանիկներ, ե՛րբ ես էլ ձեզ պէս
Ազատ կը լինեմ. ծփուն ու արձակ.
Ես էլ նըչալով ու հեռու այնպէս
Ծովը չափչփեմ ուրախ, համարձակ»...
Իսկ ալիքները գնում են, գալիս,
Շառաչում, նչում, պատասխան տալիս.
— «Հանգստութիւնդ տո՛ւր, թո՛ղ լինի այդ մեզ,
Մեր ազատութիւնն ա՛ն, տալիս ենք մենք քեզ...»

Մ. ՄԻՍԱԳԵԱՆՑ
